

րարութիւն երթալու Հռոմ եւ բանակցելու ի
Լեմբերգ հայկական Կղերանոց մը եւ Տպա-
րան մը հաստատելու մասին²¹։ Խաչատուր
այս առաքելութեան նկատմամբ ունիմ աչքի
առաջ հետեւեալ նամակը, ուսկից կը տեսնուի
նաեւ Ս. Ժողովին Լեհաստանի հարցի հանդէպ
բռնած դիրքը։

Առ Նուիրակն Լեհաստանի. 4 Ապրիլ 1631 :

(Lettere volgari della S. C. P. F. an. 1631,
T. 11, f. 39:)

Ի մեծ գովութիւն Ձեր Սրբութեան եւ
Ձեր խնամոց կարգացուցաւ այս Ս. Ժողո-
վիս մէջ Ձեր 29 Յունուար թուակիր թուղթը,
որուն բովանդակութիւնը Նորին Սրբազնու-
թեան եւ Տ. Տ. Ծիրանաւորներուն շատ մեծ

²¹ Relatio brevis կը գրէ թէ «Մովսէս Մեծ Հայ-
աստանի կաթողիկոսն, յաջորդն Մելքիսեդեկի զԽաչա-
տուր եպիսկոպոս ուրիշ համամիտ հոգեւորականներու
հետ 1630ին Հռոմ ուղարկեց, որպէս զի ըստ օրինակի
իւր նախորդներուն մատուցանէ Առաքելական Գահին
իւր հնազանդութիւնը եւ խնդրէ Առաքելական Գահէն
Հոգեւոր Դպրանոց մը եւ հայկական Տպարան։ Այս
մասին կան ի Լէոպոլիս Գեր. տեառն Լուդովիսի կար-
գինալի նամակները ուղղուած առ Մեծապ. Տ. Նուի-
րակն... որոնց մէջ նաեւ գ՛լեր. Արքեպիսկոպոսն
Հայոց կը յանձնարարէ»։ Այս մասին աղօտ տեղեկու-
թիւններ առած է նաեւ ժամանակակից մը, որ կը գրէ.
«Այլ եւ զայս եւս պատմեաց նոյն այր թէ յորժամ եկն
Խաչատուր նուիրակն ի Լով, ունէր թաղթ ի ձեռս իւր
ի յԱղթարմայ Ֆռանգացն թէ այս Խաչատուր նուի-
րակս կամի որ ի Հռոմ երթայ առ պապն վասն միա-
բանութեան ... Ձի Հայոց կաթողիկոսէն երթայ առ
Պապն վասն միաբանութեանն. զայս այսպէս պատմեաց
մեզ եկեալն ի Լովայ. բայց զսուտն եւ զճմարտն ոչ
գիտեմք»։ Ա. Վ. Համամեան, Ցուցակ հայերէն ձե-
ռագրաց Գաղատիոյ, Թ. 54: